

**ԻՐԱԿԱՆ ԹՎԵՐ
ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐ**

**§ 1. ԲՆԱԿԱՆ ԹՎԵՐ: ԲՆԱԿԱՆ ԹՎԵՐԻ ՏԱՍՆՈՐԴԱԿԱՆ
ԳՐԱՌՈՒՄԸ**

**3. Բաժանման գործողությունը բնական թվերի բազմությունում:
Բաժանում առանց մնացորդի և մնացորդով**

Ցանկացած բնական թիվ տրված n բնական թվի բաժանելիս ստացված մնացորդը $0; 1; 2; \dots; n-1$ թվերից մեկն է: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր բնական թիվ կարելի է ներկայացնել

$$nq, nq + 1, nq + 2, \dots, nq + (n - 1)$$

տեսքերից մեկով, որտեղ q -ն ոչ բացասական ամբողջ (0 կամ բնական) թիվ է: Օրինակ, յուրաքանչյուր բնական թիվ կարելի է ներկայացնել

$$3q, 3q + 1, 3q + 2$$

տեսքերից մեկով:

Համանմանորեն, յուրաքանչյուր բնական թիվ կարելի է ներկայացնել

$$4k, 4k + 1, 4k + 2, 4k + 3$$

տեսքերից մեկով:

Ընդունված է $2k$ տեսքի թվերն անվանել զույգ թվեր ($k = 0, 1, 2, 3, 4, \dots$), իսկ $2k - 1$ ($k \in N$) տեսքի թվերը՝ **կենսյա**: Զույգ և կենս թվերի միավորումը ոչբացասական ամբողջ թվերի բազմությունն է:

Օրինակներ.

ա) 51 -ը $4k + 3$ տեսքի թիվ է, քանի որ $51 = 4 \cdot 12 + 3$ ($k = 12$),

բ) 76 -ը $12k + 4$ տեսքի թիվ է, քանի որ $76 = 12 \cdot 6 + 4$ ($k = 6$),

գ) 5 -ը $7k + 5$ տեսքի թիվ է, քանի որ $5 = 7 \cdot 0 + 5$ ($k = 0$):



Հարցեր և առաջադրանքներ

1. Քանի եռանիշ թիվ կա, որոնցից յուրաքանչյուրը բաժանվում է ն 7-ի, ն 11-ի:
2. Քանի եռանիշ թիվ կա, որոնցից յուրաքանչյուրը բաժանվում է կան 7-ի, կան 11-ի:
3. 1-ից մինչև 200 բնական թվերի մեջ քանիսն են 13-ի բաժանելիս տալիս 5 մնացորդ:
4. Գտեք բոլոր այն եռանիշ թվերի քանակը, որոնք 10-ի բաժանելիս տալիս են 1 մնացորդ:

ՊԱՏԱՍԻՆՆԵՐ

1. 11: **Ցուցում:** Դրանք $77k$ տեսքի թվեր են, որտեղ $k = 2, 3, 4, \dots, 11, 12$: 2. 198:
3. 16: **Ցուցում:** Դրանք $13k + 5$ տեսքի թվեր են, որտեղ $k = 0, 1, 2, 3, \dots, 14, 15$:
4. 90: **Ցուցում:** Դրանք $10k + 1$ տեսքի թվեր են, որտեղ $k = 10, 11, 12, \dots, 98, 99$: